

---

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ**

**Հայկ Մկրտչյան**

*Իրավաբանական գիտությունների  
թեկնածու, Եվրասիա  
միջազգային համալսարանի դասախոս*

**Էդգար Մանուչարյան**

*Եվրասիա միջազգային համալսարանի  
Մագիստրատուրայի՝ «Քաղաքացիական  
իրավունք և դատավարություն»  
մասնագիտությամբ 2-րդ ուսանող*

---

**Համառոտագիր.** Սույն հոդվածում քննարկվում են սոցիալական արդարության հասկացության և հայեցակարգի նշանակության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարությանը վերաբերող խնդիրների, Սոցիալական արդարության և հարկային քաղաքականության փոխհարաբերակցության առանձնահատկությունների մասին:

Հոդվածում մանրամասն անրադարձ ենք կատարել պրոգրեսիվ և համահարթ հարկային համակարգերի նշանակությանը, առավելություններին և թերություններին, տարբեր պետությունների պրակտիկային, ինչպես նաև այդ համակարգերի ազդեցությանը հասարակության վրա սոցիալական արդարության ապահովման տեսանկյունից, որով էլ պայմանավորված՝ հանդես ենք եկել համապատասխան առաջարկություններով:

**Բանալի բառեր.** սոցիալական արդարություն, հարկային համակարգ, պրոգրեսիվ և համահարթ հարկում, աղքատության վերահսկում :

**Ներածություն**

Ներկայիս ժամանակաշրջանի կարևոր հարցերից մեկն «արդարության» հայեցակարգի ձևավորումն է, որը գնալով ավելի է տարածվում տարբեր իրավիճակներում և առօրյա հանգամանքներում, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Բոլորն զգում են, որ կարևոր է ոչ միայն այն, որ կյանք նավելի լավ լինի նյութական հարստության առումով, կարևոր է, որ այն նաև իրականում արդար լինի, գնահատվեն կարողությունները, որ լավագույն աշխատանքը լինի ավելի լավը և պարգևատրվի: Սոցիալական արդարության երևույթի վերլուծությունն օգնում է ավելի լավ հասկանալ դարաշրջանի էությունը և դրա սոցիալական վերափոխումները: Այդ իսկ պատճառով որևէ քաղաքական կամ գիտական ոլորտ չի կարող դա շրջանցել:

Սոցիալական և բարոյական արժեքների համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնելով՝ սոցիալական արդարությունը հասարակության գործունեության գնահատման համարհիմնարար չափանիշ է՝ իր անդամների քաղաքացիական և տնտեսական իրավունքների ապահովման և պաշտպանության գործում: Սոցիալական արդարության իրականացումը ենթադրում է հասարակության յուրաքանչյուր քաղաքացու անձնական իրավունքների և ազատությունների որոշակի մակարդակի երաշխավորում՝ բացառելով որևէ մեկի նկատմամբ խտրականությունը սոցիալական, ազգային, ռասսայական, սեռային և այլ հիմքերով:

Յուրաքանչյուրս ունենք սոցիալական արդարության վերաբերյալ սեփական պատկերացումները, սակայն անհրաժեշտ է հասկանալ սոցիալական արդարության տերմինի և հայեցակարգի հասկացության նշանակությունը:

«Սոցիալական արդարություն» տերմինի արմատները գալիս են քրիստոնեական աստվածաբանությունից, ընդ որում՝ առաջին անգամ նշվել է 1840-ականների սկզբին Լուիջի Տապարելլիի «Բնական իրավունքի տեսական տրակտատում»<sup>1</sup>:

Սոցիալական արդարության ամենաազդեցիկ հետազոտություններից մեկը 20-րդ դարի ամերիկացի փիլիսոփա Ջոն Ռոլսի աշխատությունն է: «Արդարության

---

<sup>1</sup>Տե՛ս Dennis Heibert, The Recurring Christian Debate about Social Justice: A Critical Theoretical Overview, London, 2022, էջեր՝ 58-59 :

տեսություն» աշխատության մեջ (1971), որը նա անվանեց որպես սոցիալական արդարության տեսություն, Ռոլանդ Բոլթոնը «արդարությունը որպես ազնվություն» իր տեսականը:<sup>2</sup> Այսինքն, ըստ Ռոլանդ Բոլթոնի՝ ազնվությունը դիտարկվեց որպես սոցիալական արդարության հատկանիշ:

20-րդ դարի էվոլյուցիայի ընթացքում ձևավորվել են սոցիալական արդարության գաղափարի վերաբերյալ բազմաթիվ տեսակետներ: Ամենահեղինակավորներից կարելի է առանձնացնել Ռոուլսին և Բելլային: Նրանք համարվում էին նեոլիբերալ և նեոպահպանողական գաղափարախոսության առաջամարտիկներ: Օգտագործելով համակարգային մոտեցումը՝ երկու հետազոտողներն էլ սոցիալական **արդարության** խնդիրը դիտարկում են քաղաքական և սոցիոլոգիական տեսության համատեքստում՝ առաջնադրում դնելով քաղաքացիական հասարակության հիմնական ինստիտուտների բարոյական արդարացման խնդիրը: Այս խնդրի արդիականացման նոր փուլը պայմանավորված է անցումային շրջանում հասարակության արագ զարգացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Վերջին տարիներին հետազոտողները և քաղաքական գործիչները տագնապով նշում են, որ հայկական հասարակության արդիականացումն ուղեկցվում է սոցիալ-պաթոլոգիական երևույթների և հակամարտությունների կտրուկ աճով:

Ստեղծված իրավիճակը հրատապ պահանջում է միջոցների և գործոնների որոնում, որոնք նպաստում են սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների կայունացմանը, սոցիալական ուժերի համախմբմանը և սոցիալական օրգանիզմի հիմնական տարրերի ինտեգրմանը: Ներդաշնակություն, համաձայնություն /կոնսենսուս/, սոցիալական գործընկերություն. սրանք օբյեկտիվորեն անհրաժեշտ նախադրյալներ են հասարակության հետագա զարգացման համար: Սոցիալական արդարությունը կարող է և պետք է դառնա առաջատար միավորող գաղափարներից մեկը, որնառաջընթացի ճանապարհին կարող է միավորել հասարակությանը:

---

<sup>2</sup>Տե՛ս **John Rawls**, A Theory of Justice (The Belknap Press of Harvard University Press: Cambridge/ Massachusetts, 2005, էջեր՝ 3–7 (մուտք՝ 01.09.2024 )):

Սոցիոլոգիական տեսանկյունից այս հարցը դեռ գործնականում ուսումնասիրված չէ, և սա, մեր կարծիքով, ժամանակակից սոցիալական և հումանիտար գիտելիքների լուրջ բաց է:

Խոսելով Սոցիալական արդարության հասկացության մասին՝ պետք է նշենք, որ, օրինակ, Մ. Նովակը սոցիալական արդարություն հասկացությունն օգտագործում է, որպեսզի ընդգծի օրենքի կարգավորիչ դերը հարստության, եկամուտների և իշխանության վերաբաշխման հարցում:<sup>3</sup>

Տապարելլի սոցիալական արդարության դիրքորոշմամբ՝ այն պարզապես արդարության կիրառում էր սոցիալական հարցերում: Ըստ նրա՝ մարդիկ պետք է անեն այն, ինչ ճիշտ է՝ հիմնվելով բնական աստվածաբանության և կրոնի վրա հիմնված բարոյականության հայեցակարգի վրա, և իր պատմության մեծ մասում սոցիալական արդարությունը եղել է կրոնական հասկացություն:<sup>4</sup>

Հայ հետազոտող Նունե Զոմարդյանն էլ տվել է իր սեփական ձևակերպումը Սոցիալական արդարության մասին: Ըստ իր մեկնաբանման՝ «Սոցիալական արդարությունը պետության և անհատի փոխադարձ սոցիալական պատասխանատվությունն և պարտականություններն են, որի ուժով պետությունը պարտավորվում է յուրաքանչյուրի արժանապատիվ կյանքի համար ապահովել բարեկեցության որոշակի մակարդակ, նպաստել վերջինիս մասնակցությանը հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր կյանքին, իսկ անհատը պարտավորվում է լինել ինքնուրույն և սոցիալապես պատասխանատու իր գործողությունների համար»:<sup>5</sup>

---

<sup>3</sup> Տե՛ս Michael Novak, Defining Social Justice , December 2000, [Defining Social Justice by Michael Novak | Articles | First Things](#), էջեր՝ 4-5 (մուտք՝ 14.09.2024 ):

<sup>4</sup> Տե՛ս Thomas Patrick Burke, The origins of Social Justice, Taparelli Dazegilio, October 2014 , [The Origins of Social Justice: Taparelli d'Azeglio - Intercollegiate Studies Institute \(isi.org\)](#). էջեր՝ 4-5 (մուտք՝ 19.09.2024 ):

<sup>5</sup> Տե՛ս **Զոմարդյան Ն.Ս.**, Սոցիալական արդարությունը, որպես իրավաստեղծ գործընթացի որակական չափանիշ, Բանբեր Եվրասիա միջազգային համալսարան, Երևան, 2021, էջեր՝ 21-35(մուտք՝ 10.09.2024 ):

Խոսելով արդարության և, առհասարակ, սոցիալական արդարության մասին՝ անհրաժեշտ է խոսել նաև հավասարության մասին: Արդարության հայեցակարգը, անշուշտ, ներառում է հավասարության հայեցակարգը, որը հասկացվում է ոչ թե որպես պարզունակ «հավասարեցում», այլ որպես իրավունքների և հնարավորությունների հավասարության ապահովում, բոլոր քաղաքացիների հավասար հասանելիություն կյանքի հիմնական բարիքներին: Մարդասիրության և արդարության սկզբունքները պահանջում են, որ հասարակությունը բոլոր ջանքերը գործադրի անապահով մարդկանց առողջությունը վերականգնելու, իրագործելի աշխատանքի համար պայմաններ ստեղծելու, աշխատունակությունը կորցրածների մասին հոգ տանելու և նրանց ճակատագրի հույսին չթողնելու համար:

Մեր բարեփոխված հասարակության կյանքում մենք տեսնում ենք բազմաթիվ մութ կետեր, անարդարության, դաժանության բացահայտ դրսևորումներ: Եվ ընդհանրապես, ժամանակակից աշխարհի ուրվագծերը, ցավոք, չեն համընկնում իդեալական բարոյական «օրինաչափության» հետ, չի կարելի չընդունել, որ անարդարությունը ժամանակակից քաղաքակրթության դաժան հիվանդություններից է: Այժմ անհրաժեշտ է ավելի հավասարակշռված, սթափ մոտեցում, որը բացառում է կամայականությունը, շտապողականությունը: Հետևաբար, հրատապ խնդիրն է պարզել սոցիալական իրականացման իրական հնարավորությունները: Շատ կարևոր է վերլուծել այն ոլորտները, միջոցները և գործոնները, որոնք նպաստում են սոցիալական նպաստների արդար բաշխմանը, վերացնել (կամ գոնե նվազեցնել) անարդարության այն երևույթները, որոնք վրդովեցնում են մարդկանց բարոյական զգացմունքները և նվազեցնում նրանց աշխատանքային և սոցիալական գործունեությունը:

Սոցիալական արդարությունը բնութագրում է մարդկանց միջև փոխհարաբերությունները՝ նրանց միջև օգուտների (նյութական կամ հոգևոր) բաշխման տեսանկյունից: Սոցիալական արդարության իդեալի կարևորագույն հատկանիշն է «մարդկանց սոցիալական հավասարությունը, քաղաքացիների բոլոր կատեգորիաների համակողմանի զարգացման համար հավասար

հնարավորությունները և հասարակության բարեկեցության բարձրացումը, ազատության առկայությունը՝ որպես սոցիալական բռնության տարբեր տեսակներից պաշտպանության երաշխիք»:<sup>6</sup> Ինչպես նշում են հետազոտողները. «Սոցիալապես անարդար հարաբերություններ տեղի են ունենում, երբ առկա են տեսանելի և անտեսանելի անարդար գործողություններ հասարակությունում, որոնք նպաստում են անհավասարությանը և խոչընդոտում են սոցիալական առաջընթացին»:<sup>7</sup>

Արդարության վերաբերյալ ներկայիս պատկերացումները մեծ մասամբ հիմնված են պատմականորեն ձևավորված պատկերացումների վրա, ինչն այս փուլում կորցրել է իր նշանակությունը, քանի որ իրավիճակի վերլուծության արդյունքում, որը նաև ներառում է ընդունվող օրենքների վերլուծություն, մենք տեսնում ենք, որ միայն աճում է հարկային բեռը, իսկ քաղաքացու սոցիալական վիճակը նվազում է, արտագաղթի թիվն էլ՝ ավելանում:

Այսպիսով՝ Սոցիալական արդարության սկզբունքն իր էությամբ խմբակային է: Սակայն հիմնական օրենքներում, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության մեջ, առաջին հերթին շեշտը դրվում է տարբեր խմբերի իրավունքների, հավասարության և հավասար հնարավորությունների վրա: Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարության մասին խոսելիս կարելի է նշել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը: Ներկա պայմաններում դա պարզապես բավարար չէ: Բնակչության տարբեր սոցիալական խմբերի սոցիալ-տնտեսական կենսամակարդակի հավասարեցման համար պետության պարտականությունները պետք է ամրագրվեն սահմանադրորեն: Կարծում ենք, որ նման նորմերի առկայությունը Հայաստանի համար ավելորդ չի լինի:

Այսպիսով անհրաժեշտ է նաև հասկանալ Հայաստանի Հանրապետությունում առկա խնդիրները և սոցիալական արդարության դրսևորումը:

### **Սոցիալական արդարությունը Հայաստանի Հանրապետությունում**

---

<sup>6</sup>Տե՛ս **Бербешкина З. А.**, Справедливость как социально-философская категория, Москва, 1983, էջ՝ 80:

<sup>7</sup>Տե՛ս **Севастьянов А. М.**, Социальная несправедливость в отношениях власти и общества: опыт социологического измерения // Социология власти. № 1, Москва, 2012, էջեր՝ 160-164:

Հայ հասարակության մեջ ներկայումս առավել խորացել է «արդարության» սոցիալական արդարության հարցը: Ինչպե՞ս ստեղծել պայմաններ անհատի համակողմանի զարգացման համար, ինչպե՞ս արդարացիորեն պարզևատրել բոլորին իրենց աշխատանքի համար, ինչպիսի՞ն պետք է լինի իրական ժողովրդավարությունը, ինչպե՞ս դարձնել տնտեսական համակարգն իսկապես արդյունավետ, ի՞նչ մեխանիզմներով կարող են երաշխավորվել քաղաքացիների իրավունքները, ինչպիսի՞ հարկային քաղաքականություն պետք է վարի պետությունը, որպեսզի ապահովի սոցիալական արդարություն հասարակության բոլոր շերտերի համար: Այս բոլոր հարցերը ներառվում են սոցիալական արդարության խնդիրների հովանու ներքո:

Առհասարակ, ինչպես Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ), այնպես էլ աշխարհում սոցիալական արդարության լիարժեք ապահովումը բխում է Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) որդեգրած Կայուն զարգացման 17-նպատակներից՝ 1-ից, որը վերաբերում է աղքատության վերացմանը, 8-րդ նպատակից՝ արժանապատիվ աշխատանքից և տնտեսական աճից, և 10-րդ նպատակից, որը վերաբերում է անհավասարությունների կրճատմանը:

ՄԱԿ-ը, Հայաստանում իր գործընկերների հետ միասին, աշխատում է Կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղղությամբ, որոնք լուծում են զարգացման այն հիմնական մարտահրավերները, որոնց մարդիկ բախվում են Հայաստանում և ողջ աշխարհում: Այս մարտահրավերների հաղթահարումից է բխում հենց սոցիալական արդարության հաստատումը:

ՀՀ ներկայիս իրավիճակը ցույց է տալիս, որ սոցիալական արդարության գաղափարը մղվել է վերջին պլան՝ նախապատվությունը տալով կոնկրետ անձանց և խմբերի շահերին: Պետք է նշենք, որ Հայաստանում գործազրկության մակարդակը, ինչպես նաև աշխատատեղերի բացակայությունը հանգեցնում են բնակչության աղքատությանը, որով իսկ արդեն խախտվում է սոցիալական արդարության սկզբունքը: Վերջին տարիների ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ-ում աղքատությունը

կազմում է մոտ 24 տոկոս: Վիճակագրական կոմիտեի հրապարակած վերջին՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տեղեկագրից պարզվում է, որ աղքատության ցուցանիշները ՀՀ-ում շարունակում են բարձր մնալ:<sup>8</sup> Իհարկե, եթե խոսում ենք պետական աշխատողների մասին, ապա այստեղ կարող ենք նշել, որ, հակառակը, ավելացել են պետական աշխատողների աշխատավարձերը: Մենք չենք ասում, որ պետական ապարատում չպետք է լինի արժանապատիվ աշխատավարձ, սակայն բնակչության մյուս շերտերի հաշվին աշխատավարձերի արհեստական բարձրացում չպետք է լինի:

Աղքատության հաղթահարումը ՄԱԿ-ի Կայուն զարգացման հենց 1-ին նպատակն է, որով ՄԱԿ-ը հանձն է առել պետությունների հետ մեկտեղ ներդնել երկրներում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր, և մինչև 2030 թ. հասնել աղքատների և խոցելիների էական չափերով ընդգրկմանը:<sup>9</sup>

Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված, որպեսզի կարողանանք Հայաստանի Հանրապետությունում նվազեցնել բնակչության աղքատությունը և վերահսկել այն, որպեսզի կարողանանք ուսումնասիրել և հասկանալ աղքատության մակարդակի բարձրացման պատճառները, առաջարկում ենք՝ միաժամանակ ստեղծել անկախ մասնագիտական կենտրոններ, որոնք վերահսկելու են աղքատության իրական շահառուներին:

## **Սոցիալական արդարության և հարկային քաղաքականության փոխհարաբերակցությունը Հայաստանի Հանրապետության օրինակով**

<sup>8</sup> Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տեղեկագիր, Երևան, 2021, էջեր՝ 30-41: [Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021 / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե \(armstat.am\)](#) (մուտք՝ 21.09.2024 ):

<sup>9</sup> Տե՛ս UnitedNations, [THE 17 GOALS | SustainableDevelopment \(un.org\)](#), [THE 17 GOALS | Sustainable Development \(un.org\)](#) (մուտք՝ 20.09.2024 ):

Սոցիալական արդարության լիարժեք ապահովման հասնելու գործուն քայլ է նաև պետության կողմից վարվող հարկային քաղաքականության վերանայումը:

Բնակչության եկամտային և գույքային բևեռացումը զսպելու նպատակով պետությունը հարկային ոլորտում առհասարակ պետք է ելնի հարկերի ոչ միայն ֆիսկալ, այլ նաև սոցիալ-վերաբաշխողական, եկամտահարկի պրոգրեսիվ հարկման նպատակադրությունից:

Մեր գնահատմամբ՝ Հարկային համակարգերը վերաբաշխաման տեսանկյունից սոցիալական արդարության հասնելու ամենահիմնական միջոցն են, իսկ եկամուտների պրոգրեսիվ հարկային համակարգերը՝ արդարացի նպատակ:

Վերջին տարիներին իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փոփոխություն (2019 թվ.), որով առաջարկվել է անցում կատարել եկամտային հարկի համահարթ համակարգի՝ սահմանելով մեկ միասնական դրույքաչափ՝ 23%, այնուհետև եկամտային հարկի դրույքաչափը մինչև 2023 թվականն աստիճանաբար նվազեցնել՝ դարձնելով 20%-ի:<sup>10</sup> Օրինագծի հեղինակները փոփոխության հիմնավորման հիմնական նպատակ սահմանեցին ազգային տնտեսության մրցունակության և ՀՀ-ում ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացումը: **Այս փոփոխությունները, փաստորեն, միայն հետապնդում էին ֆիսկալ նպատակ և չէին անրադառնում խնդրի սոցիալական բաղադրիչին, այսինքն՝ սոցիալական արդարությանը:**

Նշենք, որ Պրոգրեսիվ և համահարթ հարկերը ձեռնարկատերերի կողմից ընտրված հարկման երկու ամենատարածված ձևերն են: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, և արժե մանրամասն ծանոթանալ դրանց

---

<sup>10</sup>Տե՛ս «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, Կ-651-12.06.2020-SՀ-011/0. Երևան, 2019, [http://www.parliament.am/draft\\_docs8/K-126\\_Teghekanq](http://www.parliament.am/draft_docs8/K-126_Teghekanq). (մուտք՝ 05.09.2024 ):

հետ՝ պատկերացում ունենալու համար վերջիններիս ազդեցությանը՝ պետության կողմից սոցիալական արդարության ապահովման տեսանկյունից:

Նախ նշենք, որ Համահարթ հարկային համակարգի հիմնական թերություններից են՝

1. Համաչափորեն ազդում է ցածր եկամուտ ունեցողների վրա,
2. Եկամուտների անհավասարությունը լուծելու սահմանափակ կարողություն,
3. Առաջադիմության և արդարության բացակայություն:

Մինչդեռ, Պրոգրեսիվ հարկային համակարգը բարձրացնում է հարկերի դրույքաչափերը եկամուտների մակարդակի բարձրացման հետ մեկտեղ՝ նպատակ ունենալով նվազեցնել եկամուտների անհավասարությունը և ավելի շատ եկամուտներ հավաքել բարձր եկամուտուներ ունեցողներից:

Այս հարկային համակարգը կարող է վերաբաշխել հարստությունը և ֆինանսավորել կառավարության կարևորագույն նախաձեռնությունները, ինչպիսիք են առողջապահությունը և կրթությունը՝ բարելավելու քաղաքացիների կյանքի որակը: Այնուամենայնիվ, դա կարող է նաև չխրախուսել ձեռներեցությունը և ներդրումները, քանի որ բարձր եկամուտ ունեցողները կարող են զսպվածություն զգալ ավելի բարձր հարկերի պատճառով: Իվերջո, պրոգրեսիվ հարկային համակարգի արդյունավետությունը կախված է դրա նախագծումից և իրականացումից, ինչպես նաև այն սոցիալական և տնտեսական համատեքստից, որտեղ այն գործում է:

Հետևաբար, եթե ամբողջացնենք պրոգրեսիվ հարկային համակարգի առավելությունները, ապա կնշենք հետևյալները՝

1. Եկամուտների անհավասարությունը նվազեցնելու և սոցիալական արդարությունը խթանելու ունակություն,
2. Հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների ֆինանսավորման ավելի մեծ կարողություն,
3. Ավելի ցածր հարկային բեռ ցածր եկամուտ ունեցողների համար:

Խոսելով հարկային համակարգի հետևանքների մասին՝ նշենք, որ Համահարթ հարկման դեպքում բարձր եկամուտ ստացողների պարագայում տեղի է ունենում հարկային բեռի կտրուկ նվազում, իսկ բնակչության համեմատաբար ցածր եկամուտներ ունեցողների, հատկապես սոցիալապես խոցելի խումբ/հաշմանդամներ, անապահով խավի ներկայացուցիչներ և այլն/ կազմող անձանց դեպքում հարկային բեռի էական փոփոխություն տեղի չի ունենում: Ցածր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամտի անփոփոխության պայմաններում նկատվում է բարձր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամուտների ավելացում՝ հանգեցնելով սոցիալական բևեռացման հետագա խորացմանը:<sup>11</sup>

**Ուստի, եկամտային հարկի համահարթեցման համակարգը կհանգեցնի ցածր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամտի փոքրացմանը և բարձր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամուտների բարձրացմանը, նաև սոցիալական առումով դա կհանգեցնի օրենքով Ջինի բարձր գործակցի ամրագրմանը, ինչը կնպաստի աղքատության խորացմանն ու սրացմանը, ինչպես նաև սոցիալական առումով կհանգեցնի օրինական հարստացողների դասի առաջացմանը, սակայն նրանցից չենք պահանջելու վճարել բարձր հարկեր:<sup>12</sup>**

Էդգար Մանուչարյանը, ուսումնասիրելով եկամտահարկի համահարթ հարկման թերության և պրոգրեսիվ հարկման առավելությունները, նշում է, որ դրա մասին փաստում է նաև այլ երկրների փորձը: Մասնավորապես՝ Սլովակիան 2013 թվականին անցում կատարեց պրոգրեսիվ հարկային քաղաքականության,<sup>13</sup> 2007 թվականին Մակեդոնիան հրաժարվեց համահարթ հարկային համակարգից և անցում կատարեց պրոգրեսիվ հարկման՝ համարելով, որ համահարթ հարկային համակարգը

---

<sup>11</sup>Տե՛ս ՀՀ ԱԺ Աշխատակազմի տնտեսագիտական-փորձաքննության վարչության տնտեսական փորձաքննության բաժնի տրված եզրակացություն, 2019 թվականի ապրիլի 17, [National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am](http://parliament.am) (մուտք՝ 15.08.2024) :

<sup>12</sup>Տե՛ս [Social justice as a factor of economic development: a study in the Republic of Armenia](#) – Hayk Mkrtchyan , Edgar Manucharyan, Madrid, Spain, 2024, էջեր՝ 9-15 (մուտք՝ 10.09.2024) :

<sup>13</sup> Տե՛ս Jan Remeta, Sarah Perret, Martin Jares, Bert Brys, Moving Beyond the Flat Tax - Tax Policy Reform in the Slovak Republic, 2015, էջեր՝ 9-10:

խախտում է սոցիալական արդարությունը: Վիճակագրական տվյալները վկայում են, որ համահարթ տոկոսադրույքի չեղարկումից և պրոգրեսիվ եկամտահարկին վերադարձից հետո զգալիորեն աճել են բյուջետային եկամուտները (2013-2015թթ. ՀՆԱ 34 %-ից հասնելով ՀՆԱ 40 %-ին): Ներկայումս Սլովակիայի թե՛ կառավարող կուսակցությունը, թե՛ ընդդիմությունն այլևս չեն դիտարկում համահարթեցման հնարավորությունը և համակարծիք են պրոգրեսիվ հարկային համակարգի նպատակահարմարության հարցում:

Մեկ այլ օրինակով նշենք, որ Գերմանիան ևս հրաժարվեց համահարթ հարկումից և անցում կատարեց պրոգրեսիվ հարկային քաղաքականության: Հանգամանքների բերումով Գերմանիան հրաժարվեց համահարթ եկամտահարկի գաղափարից: 2005 թվականի ընթացքում գերմանական տնտեսությունը սկսեց կրկին աճել՝ առանց հարկային բարեփոխումների իրականացման:<sup>14</sup> Ամերիկայի Միացյալ Նահանգները, Միացյալ Թագավորությունը և մի շարք այլ քաղաքակիրթ և զարգացած պետություններ ևս անցում են կատարել պրոգրեսիվ հարկային համակարգին՝ նշելով, որ դա սոցիալական արդարության ապահովման երաշխիքներից է:

Քննարկման արդյունքում գալիս ենք այն եզրահանգմանը, որ, հաշվի առնելով փորձագիտական վերլուծությունները, առկա կարծիքները, կառավարությունը պետք է հրաժարվի եկամտային հարկի համահարթ սկզբունքի կիրառումից, քանի որ հարկերի համահարթեցման հետևանքով կառավարությունը սոցիալական իրավունքների և սոցիալական արդարության տեսանկյունից խախտում է իր քաղաքացիների իրավունքները: Մինչդեռ, եթե հրաժարվենք համահարթ հարկումից և անցում կատարենք պրոգրեսիվ հարկմանը, ապա կկարողանանք ապահովել սոցիալական արդարություն հասարակության տարբեր շերտերի համար, այլ ոչ թե ապահովված խավի համար միայն:

---

<sup>14</sup>Տե՛ս Քաղաքական դիսկուրս, Հարկային համակարգ, արդարություն և տնտեսական զարգացում. Համաժողովի նյութեր, [Հարկային համակարգ, արդարություն և տնտեսական զարգացում. Համաժողովի նյութեր | Քաղաքական դիսկուրս - Միտքը փոփոխություն է \(diskurs.am\)](#), 08.03.2019, (մուտք՝ 14.09.2024 ):

Մասնավորապես, անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել Հարկային օրենսդրությունում՝ ուղղված պրոգրեսիվ հարկմանն անցնելուն և շուկայի անհատ մասնակիցների վարձակալական եկամուտների կանխելուն, որոնք գոյանում են անբարեխիղճ մրցակցության արդյունքում: Համակցված այս միջոցառումները կարող են բերել ոչ միայն կարճաժամկետ էֆեկտ՝ լրացուցիչ հարկային եկամուտներից բյուջեի եկամուտների ավելացման և բնակչության աղքատ և միջին խավերի կողմից սպառողական պահանջարկի ավելացման պատճառով, այլև երկարաժամկետ դրական հետևանքներ՝ կապված հասարակության սոցիալական մթնոլորտի բարելավման, աշխատողների բարեխիղճ աշխատանքի մոտիվացիայի բարձրացման և հավասարության համար:

Վերոնշյալ խնդիրները լուծելու դեպքում կկարողանանք ապահովել սոցիալական արդարություն հասարակության բոլոր շերտերի համար հավասարապես:

### **Եզրակացություն և առաջարկություններ**

Այսպիսով, ամփոփելով մեր հետազոտությունը՝ կարող ենք եզրակացնել, որ սոցիալական արդարության հասկացության և հայեցակարգի վերաբերյալ գիտությունում և պրակտիկայում կան տարաբնույթ մեկնաբանություններ և կարծիքներ: Այնուամենայնիվ, եզրակացնենք, որ սոցիալական ոլորտում արդարության սկզբունքի կոնկրետ իրականացումը ներառում է երկու հիմնական ասպեկտ՝ 1-ին՝ բնակչության զբաղվածության ակտիվության և նախաձեռնողականության խթանում, և 2-րդ՝ առավել խոցելի շերտերի և խմբերի սոցիալական պաշտպանվածություն: Սանձանակում է աջակցել տարբեր ձևերի՝ միջին և փոքր բիզնեսին, առավելագույնի հասցնել սոցիալապես շահավետ մասնավոր նախաձեռնության և ազատ տնտեսական գործունեության հնարավորությունները, իրականացնել սեփականության արդար վերաբաշխում: Միևնույն ժամանակ, օբյեկտիվ անհրաժեշտություն է սոցիալական նպաստների վերաբաշխման արդյունավետ մեխանիզմների հետևողական ձևավորումը, աղքատության վերահսկումը և դրա դեմ պայքարը, ինչպես նաև

հարկային նոր համակարգի ներդրումը: Այս խնդիրների լուծումը պետության կողմից թույլ կտա ոչ թե խոսքով, այլ գործով ապահովել սոցիալական արդարություն հասարակության բոլոր շերտերի համար հավասարապես:

Հետևաբար, հանդես ենք գալիս հետևյալ հիմնական առաջարկություններով՝

1, Ստեղծել հատուկ անկախ մասնագիտական կենտրոններ, որոնք համագործակցելով պետական իրավասու մարմինների հետ՝ վերահսկելու են աղքատության իրական շահառուներին՝ դրանով փորձելով նվազեցնել աղքատության մակարդակը:

2. Կանխելու համար հասարակության սոցիալական բևեռացումը, առանձին անհատների կամ խմբերի եկամուտների անհիմն ավելացումը և ապահովելու համար սոցիալական արդարություն՝ առաջարկում ենք բարեփոխումներ իրականացնել ներկայիս Հարկային օրենսդրությունում՝ հրաժարվելով համահարթ հարկային համակարգից և անցում կատարել պրոգրեսիվ հարկային համակարգին:

---

## **СВЯЗЬ МЕЖДУ СОЦИАЛЬНОЙ СПРАВЕДЛИВОСТЬЮ И НАЛОГОВОЙ ПОЛИТИКОЙ. ПО ПРИМЕРУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**Айк Мкртчян**

*кандидат юридических наук,  
преподаватель Международного  
университета Евразия,*

**Эдгар Манучарян**

*студент 2-го курса магистратуры  
Международного университета «Евразия»  
специальность «Гражданское право и  
судебные разбирательства»,*

**Аннотация:** В данной статье рассматриваются понятие и понятие социальной справедливости, а также особенности вопросов социальной справедливости в Армении, социальной справедливости и налоговой политики.

В данной статье мы подробно рассмотрели значение прогрессивной и налоговой систем, преимущества и недостатки, практику различных государств, а также влияние этих систем на общество с точки зрения обеспечения социальной справедливости, в результате чего были сформулированы соответствующие предложения.

**Ключевые слова:** социальная справедливость, налоговая система, прогрессивная плоская система налогообложения, борьба с бедностью.

---

## **THE RELATIONSHIP BETWEEN SOCIAL JUSTICE AND TAX POLICY. FOLLOWING THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA**

**Hayk Mkrtchyan**

*Candidate of legal sciences,  
lecturer at Eurasia International University,*

**Edgar Manucharyan**

*2<sup>nd</sup> year student of Eurasia International  
University's Master's program,  
majoring in "Civil Law and Procedure",  
lecturer at Eurasia International University,*

---

**Summary:** This article discusses the significance of the concept and concept of social justice, as well as the characteristics of social justice issues in Armenia, social justice, and tax policy.

In this article, we have detailed the meaning of progressive and tax systems, advantages and disadvantages, the practice of various states, as well as the impact of these systems on social justice, in terms of social justice, which we have made appropriate suggestions. This article discusses the significance of the concept and concept of social justice, as well as the characteristics of social justice issues in Armenia, social justice, and tax policy.

This article details the significance of progressive and comprehensive tax systems and their impact on social justice in terms of social justice.

**Keywords:** social justice, tax system, progressive and flat taxation, poverty control.

*Հոդվածը գրախոսվել է՝ 02.07.2024թ.  
Ներկայացվել է փակագրության՝ 08.09.2024թ.*